

Եկե՛ք բուներանգենք



Պրոֆ. Յուտակա Նիշիյամա
Օսակայի Տնտեսագիտական Համալսարան, ճապոնիա
Էլ. փոստ. nishiyama@osaka-ue.ac.jp

Պատրաստման եղանակը


1. Վերցրեք հաստ ստվարաթղթի մի կտոր (0.5-0.7մմ):
2. Ստվարաթղթի վրա դրեք պատճենահանման թուղթը, իսկ վերջինիս վրա դրեք բուներանգի մոնլշը:
3. Գնդիկավոր գրիչով արտանկարեք բուներանգը պատճենահանման թղթի վրա: Չմոռանաք նաև թևերի երկայնքով կետագծերի մասին:
4. Նշեք, որպեսզի առաջնամասն ու ետնամասն իրարից տարբերեք:
5. Մկրատով խնամքով կտրեք ստվարաթղթե բուներանգը:
6. Եթե կան որևէ անհարթություններ, ուղղեք դրանք բուներանգը հարթ մակերևույթի վրա դնելով:
7. Կետագծերի վրա քանոն դրեք: Թեթևակի ուժ գործադրելով գրչով մեկ-երկու անգամ անցեք կետագծերի երկայնքով, որը ձեզ թույլ կտա ավելի հեշտ կերպով ծալել թևերը:
8. Յուրաքանչյուր թևը 10-30 աստիճանով թեքեք վեր: (Եթե ձախլիկ եք, ապա թեքեք այն դեպի ներքև):

Ինչպես նետել


1. Բռնեք բուներանգի մեկ թևը բութ մատի և ցուցամատի միջոցով առաջամասը դեպի ձեզ (եթե ձախլիկ եք, բուներանգը պահեք ետնամասով դեպի ձեզ):
2. Պահեք բուներանգը ուղղահայաց դիրքով:
3. Բուներանգը նետելիս, այն բաց թողելուց անմիջապես առաջ թևքով հրում կատարեք, որպեսզի բուներանգն ավելի մեծ պտույտ գործի:
4. Բուներանգը նետեք ձեր աչքերի բարձրությամբ, ինչպես նետն եք բաց թողնում:



(1) Ծալվածքները վեր (10-30 աստիճան):



(2) Թեքեք թեթևակի դեպի վեր:



Յուրաքանչյուր ոք կարող է Եկեք կատարենք այս արտասովոր փորձը

Ինչպես է այն թռչում

Բուներանգն աջլիկների համար թեքվում է ժամացույցի սլաքին հակառակ, և ժամացույցի սլաքների ուղղությամբ ձախլիկների համար՝ թռչելով աչքի բարձրության վրա: Թռիչքի երկարությունը 3-4 կազմում է մետր, իսկ տևողությունը 1-2 վայրկյան:

Ինչպես այն բռնել

Բուներանգը վերադառնում է հորիզոնական դիրքով: Պահեք ձեր ձեռքերն իրարից 30 սմ հեռավորության վրա և մոտենալիս ավերով արագ բռնեք բուներանգը:

Ուշադրություն

Բուներանգները կարող են չափազանց վտանգավոր լինել: Մի՛ նետեք այն մարդկանց վրա: Նախքան բուներանգը նետելը համոզվեք, որ մոտակայքում ոչ-ոք չկա:

Այստեղ
ցուցադր
ված է
**Ցանկություն
Խաղաղության
Լավագույնը**


առաջամասի բնական չափսը:

20 սմ


©Y.Nishiyama

Ինչու՞ է բուժերանգը միշտ վերադառնում

Օդում ուղղահայաց ընթանալիս բուժերանգը միաժամանակ նաև պտտվում է: Առաջ ընթանալու և պտտվելու ընթացքում պտույտի վերևի թևերն ավելի արագ են պտտվում քան ներքևի թևը: Արագության տարբերության հետևանքով առաջանում է ամբարձման տարբերություն. վերևի թևն ավելի է բարձրանում քան ներքևինը: Քանի որ բուժերանգը պտտվում է առանցքի շուրջը, իսկ պտտման վերևում բաժրությունն ավելի մեծ է քան ներքևում, ապա կիրառվող ուժի արդյունքում բուժերանգի շարժման ուղղությունը փոփոխվում է դեպի ձախ, և բուժերանգը ետ է վերադառնում: Այն նման է պտտվող իլիկի, որն անընդհատ թեքվելով չի ընկնում: Այն անվանում են հոլակային (գիրոսկոպիկ) կոնապտույտ:



Նկար.1 Ձախ թեքման բացատրությունը



Նկար. 2 Աջակողմյան կանոնը

Բուժերանգ Ասոցիացիայի Ինտերնետային կայքերը

Ճապոնական Բուժերանգ Ասոցիացիա

<http://www.jba-hp.jp/>

Կանադայի Բուժերանգ Ցանց

<http://www.kbn3.com/>

Միացյալ Նահանգների Բուժերանգ Ասոցիացիա

<http://www.usba.org/>